



Գործընկերություններ խնամքի մեջ Յոգ ենք տանում միասին

Տեղեկատվական փաթեթ այն մարդկանց համար,
ովքեր այցելում են և կամավոր աշխատում տարեցների
խնամքի բնակելի հաստատություններում



Australian Government
Aged Care Quality and Safety Commission

Engage
Empower
Safeguard



Բովանդակություն

Անվտանգ պահելը ձեզ և տարեց անձին, ում այցելում եք	3
Ձեռքերի հիգիենա	6
Դիմակ կրելը	9
Անձնական պաշտպանական սարքավորումներ (PPE) կրելու խորհուրդներ	13
Վարակի տարածման նվազեցում վարակի բռնկման ժամանակ	14
Ստուգացանկ՝ Այցելություն տարեցների ինսամքի տուն վարակի բռնկման ժամանակ	17
Ի՞նչ է Գործընկերություններ ինսամքի մեջ ծրագիրը	21
Հայտարարություն	23



Անվտանգ պահելը ձեզ և տարեց անձին, ում այցելում եք

Տարեցների խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովը մշակել է նյութեր՝ օգնելու ընտանիքներին և մտերիմ ընկերներին պահպանել սոցիալական ներգրավվածությունը և խնամքի կարևոր հարաբերությունները տարեցների խնամքի տանը ապրող մարդկանց հետ, նույնիսկ վարակի բռնկման ժամանակ: Այս տեղեկատվական փաթեթը կգարգացնի ձեր հմտությունները մանրէների տարածումը կանխելու համար:

Ի՞նչ տեղեկատվություն է ներառված այս փաթեթում:

Այս փաթեթը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը.

- անվտանգ պահելը ձեզ և տարեց անձին, ում խնամում եք
- ձեռքերի հիգիենա
- դիմակ կրելը
- վարակի տարածման նվազեցում համաճարակի բռնկման ժամանակ
- տարեցների խնամքի տուն այցելելը վարակի բռնկման ժամանակ:

Հանձնաժողովը նաև մշակել է առցանց ուսուցման մոդուլներ, որոնք ներառում են այս ուսուցողական գրքույկի հիմնական տեղեկատվությունը: Դուք կարող եք մուտք գործել ուսուցման մոդուլներ [Հանձնաժողովի կայքում](#):

Ինչո՞ւ է կարևոր վարակի կանխարգելումը և վերահսկումը:

Տարեցները մեր համայնքի ամենախոցելի մարդկանցից են, հատկապես, երբ խոսքը վերաբերում է վարակների և վարակիչ հիվանդությունների ազդեցությանը: Եթե դուք այցելում եք տարեցների խնամքի տան գտնվող մեկին, դուք պարտավոր եք հետևել վարակի կանխարգելման և վերահսկման պատշաճ գործելակերպին:

Երբ այցելում եք տարեցների խնամքի տուն, կան մի քանի գործողություններ, որոնք դուք պետք է մշտապես կատարեք: Երբեմն դուք կարող եք լավ զգալ, բայց դեռ վարակիչ լինել՝ առանց տեղյակ

լինելու: Հետևաբար ձեր կատարած յուրաքանչյուր գործողություն մեծ փոփոխություն է առաջացնում և օգնում է կանխել վարակիչ հիվանդությունները, ինչպիսիք են ստամոքսային, գրիպի և COVID-ի տարածումը, որպեսզի կարողանաք օգնել բոլորին, ներառյալ ինքներդ ձեզ, անվտանգ մնալ:

Չիշեք՝

- Յուրաքանչյուրն ունի իր դերը վարակի կանխարգելման և վերահսկման գործում:
- Կարևոր է հետևել բոլոր ուղեցույցներին և պահանջներին, որոնք տրամադրվում են տարեցների խնամքի տան կողմից: Խոսք տարեցների խնամքի տան հետ՝ նրանց պահանջների մասին լրացուցիչ տեղեկությունների համար:
- Գործողությունները, որոնք դուք ձեռնարկում եք վարակի բռնկման ժամանակ, տարբեր կլինեն, քանի որ կան լրացուցիչ նախազգուշական միջոցներ, որոնք պետք է ձեռնարկվեն: Եթե տարեցների խնամքի տունը արձագանքում է վարակի բռնկմանը, լրացուցիչ տեղեկությունների համար հետևեք [վարակի բռնկման ստուգացանկին](#):
- Յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի պահպանել ընկերային հարաբերություններ՝ ներառյալ առնվազն մեկ այցելու ընդունել վարակի բռնկման ժամանակ: Հանձնաժողովի տեղեկատվական թերթիկը [Այցելուների անվտանգ մուտքի ապահովում տարեցների խնամքի տուն](#) պարունակում է հավելյալ տեղեկատվություն տարեցների խնամքի տուն այցելուների տարբեր տեսակների և տարեցների խնամք տրամադրողների պարտավորությունների մասին՝ ապահովելու այցելուների անվտանգ մուտքը:



Գործողություններ անվտանգ պահելու համար...

Նախքան տարեցների խնամքի տուն ձեր այցելությունը

- Մնացեք տանը, եթե վատառողջ եք:
- Տեղյակ եղեք հանրային առողջապահության մասին ցանկացած ահազանգի մասին, որը կարող է ազդել ձեր այցելության վրա
- Տեղյակ եղեք տարեցների խնամքի տուն այցելությունների կազմակերպման մասին
- Տեղեկացված եղեք այցելության համար պատվաստումների պահանջների մասին (օրինակ՝ COVID-ն ու գրիպը) և ամբողջովին պատվաստված եղեք:

Ձեր այցելության ժամանակ



Մաքրեք ձեր ձեռքերը

Ինչո՞ւ: Մանրէները կարող են տարածվել շփման ժամանակ: Սա տեղի է ունենում, երբ վարակիչ անձը դիպչում է որևէ անձի կամ առարկայի, և մեկ ուրիշը դիպչում է նույն տարածքին: Հնարավոր է, դուք չգիտեք, արդյոք ձեր ձեռքերի վրա մանրէներ կան:



Հագացեք կամ փռչացեք ձեր արմունկի կամ անձեռոցիկի մեջ:

Ինչո՞ւ: Վիրուսները կարող են տարածվել, երբ վարակիչ մարդը հագում է կամ փռչում, իսկ կաթիլները կամ օդափոշիները տարածվում են օդով: Եթե մենք հագում ենք մեր ձեռքերի մեջ, այս վիրուսները հեշտ են փոխանցվում այն իրերին, որոնց մենք դիպչում ենք: Հիշեք, որ անձեռոցիկ օգտագործելուց հետո միշտ պետք է մաքրել ձեռքերը:



Ձեր այցելության ժամանակ



Չեռնեք հրահանգներին

Ինչո՞ւ: Գրավոր ծանուցումները կարդալը և անձնակազմի ցուցումներին հետևելը ձեզ կտրամադրի տեղեկատվություն, որը հատուկ է այն վայրին, որը դուք այցելում եք:



Դիմակ կրեք

Ինչո՞ւ: Դիմակներ և այլ անձնական պաշտպանական սարքավորումներ (PPE) կրելը օգնում է նվազեցնել ձեր կամ մեկ ուրիշի կողմից վարակված մասնիկներ շնչելու կամ տարածելու վտանգը, երբ խոսում եք, հագում կամ փռնում:



Պահպանեք ձեր հեռավորությունը (1,5 մ), երբ կարող եք, հատկապես երբ մարդիկ հիվանդ են

Ինչո՞ւ: Սերտ շփման մեջ գտնվող մարդիկ վարակված անձից վարակված կաթիլներ կամ օդափոշիներ շնչելու մեծ վտանգի տակ են: Դուք պետք է 1,5 մ հեռավորություն պահպանեք ընդհանուր տարածքներում, սակայն այն անձից, ում համար դուք խնամք և ընկերակցություն եք ցուցաբերում, կարիք չկա պահպանել սոցիալական հեռավորություն:



Բացեք պատուհանը

Ինչո՞ւ: Հնարավորության դեպքում պատուհանը բացելը կարող է ծառայել որպես բնական օդափոխություն օդի ցանկացած վարակիչ մասնիկի համար: Նախքան պատուհանը բացելը, ստուգեք անձնակազմի հետ:

Ձեր այցելությունից հետո



Կանչեք տարեցների խնամքի տան կառավարչին, եթե դուք.

- վատ զգաք, քանի որ ձեր այցելության ընթացքում կարող եք վարակիչ լինել
- որևէ հարց կամ մտահոգություն ունեք:



Ձեռքերի հիգիենա

Ձեռքերի հիգիենան ձեռքերը մաքրելն է: Դա կարևոր մասն է, թե ինչպես եք դուք անվտանգ մնում և օգնում պաշտպանել ինքներդ ձեզ և ուրիշներին հիվանդանալուց: Մենք պետք է մաքրենք մեր ձեռքերը, երբ գնում ենք տարեցների խնամքի տուն, որպեսզի կանխենք մանրէների տարածումը:

Ձեռքերը մաքրելու 2 եղանակ կա՝

- ախտահանիչ
- ձեռքերի լվացում:

Ե՞րբ պետք է մաքրեմ ձեռքերս ախտահանիչով

Դուք պետք է մաքրեք ձեր ձեռքերը ախտահանիչով՝

- երբ մտնում եք կամ դուրս գալիս տարեցների խնամքի տնից
- նախքան բնակչի սենյակ մտնելը
- մուտքի դռան ազդանշանային սարքին, դռների բռնակներին կամ աստիճանների բազրիքներին և ցանկացած այլ ընդհանուր մակերեսներին և իրերին դիպչելուց հետո
- բնակչի սենյակից դուրս գալուց հետո



Ձեռքերը ախտահանիչով մաքրելու մասին տեսանյութը դիտելու համար, սկանավորեք ձախ կողմում գտնվող QR կոդը կամ մուտքագրեք հետևյալ հղումը ձեր համակարգչի որոնիչի մեջ՝

<https://www.agedcarequality.gov.au/resources/hand-hygiene-washing-hands-sanitiser-video-partners-care>

Ե՞րբ պետք է լվանամ ձեռքերս

Դուք պետք է լվանաք ձեր ձեռքերը օճառով և ջրով՝

- եթե դիպչել եք ինչ-որ բանի, որը մաքուր չէ
- եթե ձեր ձեռքերը տեսանելիորեն կեղտոտ են
- զուգարանից օգտվելուց հետո:



Ձեռքերը օճառով և ջրով լվանալու մասին տեսանյութը դիտելու համար, սկանավորեք ձախ կողմում գտնվող QR կոդը կամ մուտքագրեք հետևյալ հղումը ձեր համակարգչի որոնիչի մեջ՝

<https://www.agedcarequality.gov.au/resources/hand-hygiene-washing-hands-soap-video-partners-care>



Ինչպե՞ս մաքրեմ ձեռքերս ախտահանիչով



1. Զսեք ախտահանիչ

- Դուրս մղեք ախտահանիչը 1 կամ 2 անգամ ձեր ձեռքերի վրա
- Համոզվեք, որ ձեր ձեռքերը ծածկվում համար բավականաչափ ախտահանիչ կա:



2. Ձեռքերը շփեք իրար

- Միացրեք ձեր ձեռքերի ակերը:
- Շփեք ակերը ախտահանիչով:



3. Շփեք ձեր ձեռքերի ետևի կողմը

- Մեկ ձեռքի ակից դրեք մյուս ձեռքի ետևի մասի վրա:
- Միացրեք ձեր մատները և շփեք վերև ու ներքև:
- Կատարեք դա մյուս կողմի համար:



4. Միահյուսեք ձեր մատները

- Ձեր ձեռքերի ակերը միացրեք:
- Ձեր մատները միացրեք իրար և շփեք վերև ու ներքև:



5. Շփեք ձեր մատների ետևի մասը

- Մեկ ձեռքի մատները ոլորեք և շրջանաձև շարժումով շփեք մյուս ակից:
- Կատարեք այն մյուս կողմի համար:




6. Շփեք յուրաքանչյուր բթամատը

- Ձեր բթամատը շփեք մյուս ձեռքի ակից վերև ու ներքև:
- Դա կատարեք մյուս կողմի համար



7. Շփեք ձեր ձեռքերը մատների ծայրով

- Մեկ ձեռքի մատների ծայրերը շրջանաձև շարժումներով շփեք մյուս ձեռքի ակից
- Դա կատարեք մյուս կողմի համար:



8. Յուրաքանչյուր ձեռքի դաստակին քսեք ախտահանիչ միջոցը

9. Սպասեք, որ ախտահանիչը օդով չորանա:

- Ձեռքերը չորացնելու համար սրբիչ մի օգտագործեք:






Ինչպե՞ս մաքրեմ ձեռքերս օճառով և ջրով:



1. Թրջեք ձեր ձեռքերը

- Միացրեք ծորակը և թրջեք ձեռքերը:
- Պահեք ծորակը միացված, մինչ դուք կատարում եք բոլոր քայլերը, բայց մի լվացեք ձեր ձեռքերը մինչև վերջացնելը:



2. Օճառ քսեք

- Շփեք ձեր ակերը միասին:
- Համոզվեք, որ բավականաչափ օճառ եք օգտագործում:
- Դուք պետք է փրփուր ստանաք, երբ ձեռքերը միմյանց շփեք:



3. Շփեք ձեր ձեռքերի ետևի մասը

- Մեկ ձեռքի ակիլ դրեք մյուս ձեռքի ետևի մասի վրա:
- Ձեր մատները միացրեք իրար և շփեք վերև ու ներքև:
- Կատարեք սա մյուս կողմի համար:



4. Միահյուսեք ձեր մատները

- Ձեր ձեռքերի ակերը միացրեք:
- Միացրեք ձեր մատները և շփեք վերև ու ներքև:



5. Շփեք ձեր մատների ետևի մասը

- Մեկ ձեռքի մատները ոլորեք և շրջանաձև շարժումներով շփեք մյուս ակին:
- Դա կատարեք մյուս կողմի համար:



6. Շփեք յուրաքանչյուր բթամատը

- Բթամատը շփեք մյուս ձեռքի ակով վերև ու ներքև:
- Կատարեք սա մյուս կողմի համար:



7. Շփեք ձեր ակերը մատների ծայրերով

- Մեկ ձեռքի մատների ծայրերը շրջանաձև շարժումներով շփեք մյուս ձեռքի ակին:
- Դա կատարեք մյուս կողմի համար:



8. Լվացեք ձեր ձեռքերը

- Ձեռքերը պահեք ջրի տակ և հանեք ամբողջ օճառը:
- Հնարավորության դեպքում՝ օգտագործեք ձեր արմունկը ծորակը փակելու համար: ՄԻ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՁԵՐ ՁԵՌՔԵՐԸ



9. Զորացրեք ձեր ձեռքերը

- Օգտագործեք մաքուր թղթե սրբիչ ձեռքերը չորացնելու համար:
- Մի օգտագործեք կտորե սրբիչներ:

Երբ ավարտեք ձեռքերը մաքրելը, մի դիպեք լվացարանին, ծորակին կամ աղբարկղին, այլապես պետք է նորից մաքրեք ձեր ձեռքերը:



Դիմակ կրելը

Ինչու՞ պետք է դիմակ կրեմ

Դիմակ կրելը կարևոր մասն է, թե ինչպես եք պաշտպանում ձեզ հիվանդանալուց: Այն նաև օգնում է ապահով պահել այն անձին, ում այցելում եք կամ խնամում: Համայնքի մեջ դուք կարող եք կրել կտորից կամ վիրաբուժական դիմակ: Որոշ այլ դիմակներ հայտնի են որպես շնչառական միջոցներ:


Տարեցների խնամքի տներում դուք պետք է համապատասխան դիմակ կրեք՝ կանխելու մանրէների տարածումը, այդ թվում՝ մրսածության, գրիպի և COVID-ի պատճառ հանդիսացող վիրուսները: Մարդիկ կարող են մանրէներ տարածել, նույնիսկ եթե չունեն ախտանիշներ:

Ի՞նչ դիմակ պետք է կրեմ

Ձեզ և ուրիշներին պաշտպանելու համար դուք պետք է կրեք վիրաբուժական դիմակ կամ հատուկ գտիչով շնչադիմակ (նաև հայտնի է որպես PFR, P2 կամ N95 դիմակ): Կտորե դիմակները այնքան էլ արդյունավետ չեն և հարմար չեն տարեցների խնամքի տանը օգտագործելու համար:

Ձեր դիմակը պետք է հարմար տեղադրվի և ծածկի քիթը և բերանը:

Խորհուրդ է տրվում, որ դուք մաքուր սափրված լինեք (կամ գրեթե սափրված), քանի որ ապացույցները ցույց են տալիս, որ մորուքը կարող է դժվարացնել ձեր քթի և բերանի հարմար ծածկումը դիմակով: Ամբավարար ծածկելը կարող է մեծացնել մանրէների տարածման վտանգը մարդկանց համար:





Ինչքա՞ն հաճախակի պետք է փոխեմ դիմակս

Վիրաբուժական, P2 և N95 դիմակները բազմակի օգտագործման ՉԵՆ: Դուք պետք է նոր դիմակ կրեք ամեն անգամ, երբ այցելեք տարեցների խնամքի տուն: Դիմակը կարող եք կրել մինչև 4 ժամ, եթե այն չթրջվի կամ չվնասվի: Եթե ձեր դիմակը թրջվի կամ վնասվի, պետք է անմիջապես փոխեք այն:

Եթե հանեք դիմակը, այն պետք է նետեք աղբամանի մեջ և պետք է օգտագործեք նոր դիմակ: Համաճարակի բռնկման դեպքում օգտագործված դիմակները պետք է նետել հատուկ աղբամանի մեջ: Անձնակազմը ձեզ կօգնի այս հարցում:

Հիշեք, որ պետք է ախտահանեք ձեր ձեռքերը դիմակը նետելուց անմիջապես հետո:

Ինչպե՞ս կրեմ վիրաբուժական դիմակը



Քայլ 1. Մաքրեք ձեր ձեռքերը ախտահանիչով:



Քայլ 2. Դիմակը պահեք իր ժապավեններից կամ օղակներից, ապա կապեք դիմակը ձեր գլխին կամ օղակները անցկացրեք ականջների շուրջը:



Քայլ 3. Համոզվեք, որ դիմակը ծածկում է ձեր բերանը և քիթը, և որ դեմքի և դիմակի միջև բաց անցքեր չկան, և սեղմեք քթի հատվածը ձեր քթի շուրջը:



Քայլ 4. Դիմակը կրելիս մի դիպեք դիմակի առջևի հատվածին:



Ինչպե՞ս դնեմ իմ P2 կամ N95 դիմակը:



Քայլ 1. Մաքրեք ձեր ձեռքերը ախտահանիչով:



Քայլ 2. Բացեք դիմակը հակառակ կողմը դեպի վեր: Բացեք վահանակները և թուլացրեք ժապավենները: Դիմակի վերևում մետաղական շերտ կա: Սա քթի հատվածն է: Թեթևակի թեքեք այն կտուցի տեսքով:



Քայլ 3. Դիմակը պահեք ձեր ձեռքերով դրսից գավաթի տեսքով՝ ժապավենները ձեր մատների շուրջը:



Քայլ 4. Դրեք դիմակը ձեր դեմքին՝ ձեր կզակի տակ, իսկ քթի հատվածը՝ ձեր քթի կամրջի վրա:



Քայլ 5. Մեկ ձեռքով ձեր դիմակի արտաքին մասում քաշեք ներքևի ժապավենը ձեր գլխի վրա: Տեղադրեք ժապավենը ձեր պարանոցի ետևի մասում և ականջների տակ:



Քայլ 6. Քաշեք վերին ժապավենը ձեր գլխի վրա և դրեք այն ձեր գլխի վերին մասում:



Քայլ 7. Հարմարեցրեք ժապավենները: Ժապավենները չպետք է ոլորվեն:



Քայլ 8. Հարմարեցրեք դիմակը այտի և կզակի հատվածում:



Քայլ 9. Միշտ օգտագործեք երկու ձեռքերը՝ «հարմարեցնելու» և ձևավորելու քթի սեղմակը ձեր քթի կամրջի ձևին՝ մետաղական սեղմակը ներս հրելով դեպի ձեր դեմքը:



Քայլ 10. Քթի երկու կողմերում ձեր մատները շարժեք մետաղի վրայով:



Քայլ 11. Համոզվեք, որ դեմքի մագերը, մագերը և ականջօղերը դիմակի մեջ չեն:



Քայլ 12. Սեղմեք դեմքին, այտերին և քթին:



P2 կամ N95 դիմակ կրելու և հարմարություն ստուգելու մասին տեսանյութը դիտելու համար, ձախ կողմում սկանավորեք QR կոդը կամ ձեր որոնիչում մուտքագրեք հետևյալ հղումը՝ <https://www.agedcarequality.gov.au/resources/wearing-mask-video-partners-care>

Ինչպե՞ս կարող եմ ստուգել, որ իմ P2 կամ N95 դիմակը հարմար է ինձ:



Քայլ 1. Չգուշորեն ձեր ձեռքերը դրեք դիմակի եզրին:



Քայլ 2. Խորը շունչ քաշեք և պահեք մի քանի վայրկյան, որպեսզի համոզվեք, որ դիմակը դեպի ներս է ծավալվում:



Քայլ 3. Արտաշնչեք, համոզվեք, որ դիմակը դուրս է ուռչում և զգացեք, թե արդյոք օդ է դուրս գալիս:

Կարևոր է, որ ձեր դիմակը ճիշտ հարմարեցվի, որպեսզի այն կանխի վիրուսների մուտքը, երբ շնչում եք: Ձեր դիմակի հարմարեցվածությունը ստուգելու համար.

- զգուշորեն ձեր ձեռքերը դրեք դիմակի արտաքին եզրի շուրջը, մինչ դուք կատարում եք հաջորդ երկու քայլերը՝ զգալու համար, թե արդյոք օդը դուրս է գալիս ձեր դիմակի կողքերից կամ վերևից:
 - **ՔԱՅԼ 1.** Խորը շունչ քաշեք, դուք պետք է տեսնեք, որ դիմակը ծավալվում է դեպի ներս
 - **ՔԱՅԼ 2.** արտաշնչեք, այժմ դուք պետք է տեսնեք, որ դիմակը ուռչում է դեպի դուրս
- Եթե օդը դուրս է հոսում դիմակի կողքերից, վերատեղադրեք դիմակը, ամրացրեք քթի ժապավենը և վերատեղադրեք ռետինե թելը
- Եթե օդը հոսում է քթի շուրջը, վերատեղադրեք քթի ժապավենը, մինչև ամուր ծածկվի:

Եթե դուք չեք կարողանում հարմարեցնել ձեր դիմակը, խնդրեք տարեցների խնամքի տանը որևէ մեկին օգնել ձեզ: Սա կարող է ներառել ժապավենների ստուգումը և արդյոք դիմակի ծայրերում որևէ բան կա (օրինակ՝ ականջօղեր կամ մազեր):

Եթե դուք պետք է հարմարեցնեք ձեր դիմակը մինչ ստուգում եք արդյոք հարմարեցված է, ապա դիմակը հարմարեցնելուց հետո պետք է նորից ստուգեք հարմարեցվածությունը: Եթե դեռ չեք կարողանում լավ հարմարեցնել, փորձեք մեկ այլ տեսակի դիմակ: Մեր դեմքերը իրենց ձևով տարբեր են, և որոշ դիմակներ ավելի լավ են հարմարեցվում, քան մյուսները:



Անձնական պաշտպանական սարքավորումներ (PPE) կրելու խորհուրդներ

- Դիմակները կարող են ամուր և անհարմար լինել: Խնդրեք անձնակազմին ստուգել, որ ձեր դիմակը ճիշտ է տեղադրված: Ժապավենները չպետք է ծալվեն կամ ծալվեն: Դիմակի եզրերը չպետք է ծալվեն, փաթաթվեն կամ ծալվեն ձեր մաշկի վրա:
- Դիմակով խոնավեցրեք դեմքի մաշկը այցից առաջ և հետո:
- Մազերը ետ կապեք կամ ամրացրեք անձնական պաշտպանական սարքավորումները տեղադրելուց առաջ: Ձեռնոցներով ձեռքերով մի դիպչեք դեմքին՝ մազերը աչքերից հեռացնելու համար:
- Դիմակներով լավ ծածկելու համար դուք պետք է մաքուր կամ գրեթե սափրված լինեք:
- Մտածեք, թե ինչ իրեր կարող են ձեզ անհրաժեշտ լինել, նախքան անձնական պաշտպանական սարքավորումները դնելը: Անձնական պաշտպանական սարքավորումների տակից մի դիպչեք գրպաններին, պայուսակներին կամ մի հանեք հագուստի շերտերը՝ անձնական պաշտպանական սարքավորումներ կրելիս, քանի որ դա կառաջացնի աղտոտում:





Վարակի տարածումը նվազեցնելը վարակի բռնկման ժամանակ

Ամեն անգամ, երբ դուք այցելում եք տարեցների խնամքի տուն, կան վարակվելու վտանգներ, բայց կարող են լրացուցիչ վտանգներ լինել, եթե այցելեք համաճարակի բռնկման ժամանակ կամ երբ ձեր կողմից խնամվող անձը վարակված է: Երբ այցելում եք տարեցների խնամքի տուն այնպիսի վարակիչ հիվանդությունների բռնկման ժամանակ, ինչպիսին է ստամոքսային հիվանդությունը կամ COVID-ը, լրացուցիչ գործողություններ պետք է ձեռնարկեք՝ կանխելու վարակների տարածումը, վտանգները կառավարելու և բոլորին անվտանգ պահելու համար:

Եթե ցանկանում եք շարունակել այցելությունները վարակի բռնկման ժամանակ, նախ պետք է հաշվի առնեք բոլոր վտանգները, որոնք ներառում են ձեր սեփական առողջական խնդիրները և դիմադրողականությունը:

Կարևոր է հիշել, որ այցելուների և վարակների վերահսկման քաղաքականությունը տարեցների խնամքի տներում կարող է արագ փոխվել ցանկացած պահի՝ կախված վտանգներից: Տեղյակ եղեք հնարավոր փոփոխությունների մասին, որպեսզի պատրաստ լինեք, եթե համաճարակի բռնկում լինի:



Այցելության պահանջներ

Վարակի բռնկման ժամանակ տարեցների խնամքի տուն այցելությունները պետք է համաձայնեցվեն տարեցների խնամքի

տան հետ՝ համոզվելու համար, որ նրանք պատրաստ են ձեր այցելությանը: Սա կներառի համոզվել, որ կան անձնական պաշտպանական սարքավորումներ և աջակցություն ձեզ համար: Ամեն ջանք կգործադրվի, որպեսզի դուք կարողանաք շարունակել այցելել այն անձին, ում խնամում եք:

Այցելելուց առաջ համոզվեք, որ բավարարում եք տարեցների խնամքի տան բոլոր պահանջները: Տարբեր ժամանակ դրանք կարող են ներառել.

- հանրային առողջապահության ցուցումներ և ահազանգեր
- պատվաստումների պահանջները (օրինակ COVID և գրիպ)
- արագ հակազենային թեստ (RAT) կամ թեստավորման այլ պահանջներ՝ ըստ ցուցումների:
- բոլոր « գործընկերություններ խնամքի մեջ» և վայրի հատուկ ուսուցումը ավարտելը:

Վարակի բռնկման ժամանակ ձեր առաջին այցելության ժամանակ կարող է լինել նաև ներածական դասընթաց, որտեղ անձնակազմը ցույց կտա ձեզ, թե որ տարածքներ կարող եք և կամ չեք կարող մուտք գործել և համոզվել, որ դուք օգտագործում եք անձնական պաշտպանական սարքավորումները ճիշտ և անվտանգ:

Հիշեք՝ եթե վատառողջ եք, մնացեք տանը և մի այցելեք տարեցների խնամքի ծառայություն:



Հիշեք ձեռքերի հիգիենայի մասին

Դուք պետք է ձեր ձեռքերը մաքուր պահեք: Հաշվի առեք՝

- արդյո՞ք ճիշտ միջոց եք օգտագործում
- գիտե՞ք, թե երբ պետք է լվանալ և երբ ախտահանել ձեռքերը
- մաքրում եք ձեր ձեռքերը, երբ անհրաժեշտ է. օրինակ՝ ձեր այցելած անձի սենյակ մտնելուց առաջ և դուրս գալուց հետո:



Հաշվի առեք ձեզ շրջապատող անձանց

Մտածո՞ւմ եք ձեր շրջապատի մասին: Հիշեք՝

- հնարավորության դեպքում պահպանեք 1,5 մ հեռավորություն ուրիշներից
- տեղյակ եղեք որոշակի տարածքում գտնվող մարդկանց թվի սահմանափակումների մասին:

Տարեցների խնամքի տունը կբաժանվի տարբեր գոտիների՝ ըստ վտանգի: Տեղյակ եղեք, թե որտեղ կարող եք և որտեղ չեք կարող մուտք գործել, երբ տարեցների խնամքի տանն եք և հետևեք կանոններին:



Կրեք համապատասխան անձնական պաշտպանական սարքավորումներ

Անձնական պաշտպանական սարքավորումները կամ PPE-ն ներառում են դիմակներ, զգեստներ, ձեռնոցներ և աչքերի պաշտպանություն: Տարեցների խնամքի տունը կարող է խնդրել ձեզ կրել անձնական պաշտպանական սարքավորումներ՝ վարակվելու և մանրէներ փոխանցելու վտանգը նվազեցնելու համար:

Համաճարակի բռնկման դեպքում պետք է կրել ավելի բարձր պաշտպանական դիմակներ: Դրանք կոչվում են P2 կամ N95 դիմակներ: Դիմակը հանելիս անհրաժեշտ է պատշաճ կերպով հանել այն և ախտահանել ձեռքերը:

Ձեզանից կարող է պահանջվել կրել լրացուցիչ անձնական պաշտպանական սարքավորումներ ձեր այցելության ժամանակ, երբ.

- անձը, ում այցելում եք, վատառողջ է և սպասում է թեստի արդյունքի
- անձը, ում այցելում եք, բարձր վտանգ ներկայացնող կոնտակտ է, և հնարավոր է, որ նա վարակված լինի
- Տարեցների խնամքի տանը վարակի բռնկում կա.

Բռնկման դեպքում դա կարող է ներառել կրել.

- P2 կամ N95 դիմակներ, որոնք ունեն պաշտպանության ավելի բարձր մակարդակ: Ձեր դիմակը հանելիս անհրաժեշտ է պատշաճ կերպով հեռացնել այն և ախտահանել ձեռքերը:
- ակնոցների պաշտպանություն, ինչպիսիք են անվտանգության ակնոցները, պաշտպանիչ ակնոցները կամ դեմքի վահանները (հիշեք՝ նշանակումով ձեռք բերված ակնոցները չեն ապահովի համապատասխան պաշտպանություն)
- խալաթներ
- ձեռնոցներ:



Հետևեք ցուցումներին

Կարևոր է, որ հետևեք տարեցների խնամքի տան բոլոր ցուցումներին, ներառյալ շենք մտնելը և տեղաշարժվելը:

Վարակի բռնկման դեպքում ձեր տեղաշարժը կսահմանափակվի տարեցների խնամքի տանը գտնվող հատուկ տարածքներով, որոնք կոչվում են գոտիներ տարեցների խնամքի տան մեջ, ինչը նշանակում է.

- ձեր մուտքը կարող է սահմանափակվել որոշ գոտիներով
- անձնական պաշտպանական սարքավորումները փոխելու անհրաժեշտությունը, եթե դուք հատում եք գոտու տարածքը՝ օրինակ զուգարանից օգտվելու համար:

Վարակի բռնկման ժամանակ այցելությունների ժամերը և ձեր կողմից ձեռնարկված ցանկացած պայմանավորվածություն կարող է փոխվել: Ձեզ և այն անձին, ում խնամում եք, անվտանգ պահելու համար անձնակազմը ձեզ կտեղեկացնի, թե արդյոք ձեր այցելությունը սահմանափակված է տվյալ անձի սենյակով՝ ելնելով վտանգի մակարդակից:



Այլ փոփոխություններ

Դուք կարող եք նկատել բռնկման ժամանակ այլ փոփոխություններ, որոնք ներառում են.

Մաքրման ավելացում

Ընդհանուր մակերեսները, ինչպիսիք են անկողնային բազրիքները, լույսի անջատիչները և բազրիքները և ննջասենյակները կարող են ավելի կանոնավոր մաքրվել:

Փոփոխություններ սննդի մեջ

Սնունդը կարող է պատրաստվել մեկ այլ վայրում, և այն անձը, ում խնամում եք, կարող է կարիք ունենա ուտելու իր սենյակում: Հնարավոր է նաև փոփոխություն սովորական սպասքից մինչև մեկանգամյա օգտագործման իրեր:

Հսկողության ավելացում

Բոլոր բնակիչների առողջության և բարեկեցության հսկողությունը կարող է ուժեղացված լինել: Սա կարող է ներառել նրանց ջերմության, շնչառության կանոնավոր ստուգումը, և ստուգել նրանց վիճակի և ինքնազգացողության այլ փոփոխությունները:

Անձնակազմ

Տարբեր կամ նոր անձնակազմը կարող է ժամանակավորապես օգնել խնամքի և աջակցության ծառայություններում: Դա կարող է լինել այն պատճառով, որ հիմնական անձնակազմը մեկուսացված է տանը:

Խնդրում ենք հասկանալ, որ փոփոխությունները կոչված են պաշտպանելու բնակիչներին և անձնակազմին: Դրանք կլինեն ժամանակավոր:



Պահեք ձեզ և մյուսներին անվտանգ:

Մտածեք այն մասին, թե ինչպես կարող եք շարունակել այցելել այն անձին, ում խնամում եք, միաժամանակ ձեզ անվտանգ պահելով: Մտածեք այն գործողությունների մասին, որոնք դուք կարող եք ձեռնարկել՝ օգնելու դադարեցնել վարակների տարածումը ուրիշների վրա: Վարակի բռնկման ժամանակ տարեցների խնամքի տուն այցելելու հետևյալ ստուգացանկը ուղեցույց է տալիս այն քայլերի մասին, որոնք կարող եք ձեռնարկել՝ ձեր և ուրիշների համար վտանգները կառավարելու համար:

Աջակցություն հասանելի է

Կապ հաստատեք տարեցների խնամքի տան կառավարչի հետ, եթե հարցեր ունեք:

Եթե կարիք ունեք հավելյալ տեղեկատվության ցուցումների մասին, զանգահարեք՝

Իմ Տարեցների խնամք **1800 200 422** կամ այցելեք՝ www.myagedcare.gov.au

Ազգային թեժ գիծ կորոնավիրուսի դեմ **1800 020 080**



Ստուգացանկ՝ Տարեցների խնամքի տուն այցելելը վարակի բռնկման ժամանակ

Այս ստուգացանկը նկարագրում է այն գործնական քայլերը, որոնք կարող եք ձեռնարկել՝ ձեր և մյուսների համար կառավարելու վտանգները՝ վարակի բռնկման ժամանակ տարեցների խնամքի տուն այցելելիս:

Ձեր այցելությունից առաջ

Ի՞նչ	Ի՞նչու՞
Ձեռքերի հիգիենա. վստահ եղեք և վարժվեք մաքրել ձեր ձեռքերը ախտահանող միջոցներով կամ օճառով և ջրով:	Ձեռքերի հիգիենայի պատշաճ կատարումը շատ կարևոր է ձեզ պաշտպանելու մանրէներից և մանրէները ուրիշներին տարածելուց:
Տարեցների խնամքի տան հետ քննարկեք ձեր առաջին այցելության ժամանակը:	Աշխատակազմը պատրաստ կլինի ձեզ ներածական դասընթաց տալ տարեցների խնամքի տուն մուտք գործելու մասին՝ բացատրելով, թե որ տարածքները կարող եք մուտք գործել: Նրանք նաև կբացատրեն, թե ինչ անձնական պաշտպանական սարքավորումներ պետք է օգտագործեք, կօգնեն ձեզ հագնել և հանել այն և պատասխանել ցանկացած հարցի:
Հասկացեք, որ ձեր այցելությունը սահմանափակվելու է տարեցների խնամքի տան որոշակի տարածքով, օրինակ՝ ձեր խնամած անձի սենյակը:	Սա կնվազեցնի տարեցների խնամքի տանը վարակի տարածման վտանգը:
Աշխատակազմի հետ ստուգեք, թե ինչ անձնական պաշտպանական սարքավորումներ պետք է օգտագործեք: Եթե դուք չեք կրել անձնական պաշտպանական սարքավորումներ նախկինում, դրան ընտելանալը կարող է ժամանակ պահանջել, այնպես որ կարող եք ավելի կարճ այց կատարել:	Անձնական պաշտպանական սարքավորումները կօգնեն նվազեցնել վարակվելու և մանրէներ փոխանցելու վտանգը:
Համոզվեք, որ ձեր COVID-ի և գրիպի դեմ պատվաստումները ամբողջական են, և դուք կարող եք ցույց տալ ձեր պատվաստման վկայականները, եթե ձեզնից պահանջեն:	Պատվաստումը կարևոր միջոց է ձեզ պաշտպանելու վարակվելուց և հիվանդանալուց և վարակը ուրիշներին փոխանցելուց:



Այցելության օրը Նախքան ձեր տնից դուրս գալը

Ի՞նչ	Ի՞նչու՞
Չեղարկեք ձեր այցը, եթե վատառողջ եք կամ ունեք ախտանիշներ, ինչպիսիք են հազը կամ փռշտալը:	Տարեցների խնամքի տունն այցելելը, երբ վատառողջ եք, վտանգում է հետագա վարակների տարածումը տարեցների խնամքի տանը:
Հարմարավետ հագնվեք: Մի հագեք հագուստ, որը չափազանց տաք կամ սառը կլինի անձնական պաշտպանական սարքավորումների տակ: Խուսափեք հագուստից, որը տեղից դուրս կգա կամ կընկնի զգեստները հանելիս (օրինակ՝ ականջօղեր):	Անձնական պաշտպանական սարքավորումներ (օրինակ՝ խալաթներ) կրելը կարող է տաքանալ և անհարմար լինել: Անձնական պաշտպանական սարքավորումները կարող են նաև կպչել լայն հագուստի կամ զարդերի վրա:
Անձնական պաշտպանական սարքավորումներ օգտագործելիս՝ Նշանակումով տրված ակնոցները կարող են պատվել մառախուղով:	Մառախուղը նվազեցնելու համար կարող եք գնել հակամառախուղային անձեռնոցիկներ դեղատնից կամ օպտիկական խանութից: Սա կօգնի բարելավել ձեր տեսողությունը՝ անձնական պաշտպանական սարքավորումներ կրելիս:
Նախատեսեք տարեցների խնամքի տունն բերել միայն առաջին անհրաժեշտության իրեր, որպեսզի ձեր տունն չտանեք մանրէներով վարակված իրերը: Եթե դուք սովորաբար կրում եք զարդեր, ինչպիսիք են ականջօղերը կամ ժամացույցները, կարող եք դրանք թողնել տանը: Բնակչի սենյակում գտնվելու ժամանակ դուք չեք կարողանա օգտագործել խմիչքի անձնական շշեր:	Տարեցների խնամքի տան յուրաքանչյուր գոտի վարակի բռնկման ժամանակ բերված իրերը չեն կարող դուրս հանվել գոտուց, քանի դեռ չեն մաքրվել և ախտահանվել: Եթե սովորաբար ձեռքի պայուսակ եք կրում, ստուգեք անձնակազմի հետ՝ արդյոք ձեզ թույլ կտան այն բերել բնակչի տարածք: Դա կարող է հնարավոր չլինի վարակի վտանգի պատճառով: Որոշ իրեր, ինչպիսիք են սնունդը կամ գրքերը, որոնք դուք բերում եք բնակչի համար, կմնան նրա մոտ: Եթե դուք պատրաստվում եք համակարգիչ բերել բնակչի սենյակ և ցանկանում եք դրանք ձեզ հետ վերցնել այցելությունից հետո, նախ ստուգեք անձնակազմի հետ, որ դա թույլատրված է, և որ նրանք կարող են օգնել ձեզ մաքրել և ախտահանել այցելության սկզբում և վերջում:
Կերեք և խմեք տանը նախքան դուրս գալը:	Դուք չեք կարող ապահով ուտել կամ խմել առանց հանելու դիմակները, երբ բնակչի սենյակում եք:
Նախատեսեք ուտելիք կամ նախուտեստներ բերել, որոնք ձեր խնամած անձը կարող է ապահով ուտել:	Չնայած դուք չպետք է կիսեք այս կերակուրը նրա հետ, նա կարող է այն ուտել հարմարավետ և ապահով ձեր այցելության ընթացքում:
Այցելությունը սկսելուց առաջ ընդմիջում ունեցեք գուգարանից օգտվելու համար:	Հնարավոր է, որ այցելության ընթացքում չկարողանաք օգտվել բնակչի լոգարանից: Հնարավոր է, որ դուք կարողանաք օգտվել տարեցների խնամքի տանը մեկ այլ լոգարանից, հակառակ դեպքում դուք պետք է հանեք ձեր բոլոր անձնական պաշտպանական սարքավորումները և հագնեք նոր անձնական պաշտպանական սարքավորումներ:



Այցելության օրը. Ձեր խնամած անձին այցելելը

Ի՞նչ	Ի՞նչու՞
Հետևեք ցուցումներին և պատասխանեք ախտանիշների վերաբերյալ հարցերին: Ըստ պահանաջի ցույց տվեք ձեր պատվաստման փաստաթղթերը: Անձնակազմը նաև կտեղեկացնի, եթե ձեզ անհրաժեշտ է հանձնել արագ հակազենային թեստ (RAT): Տարեցների խնամքի տան անձնակազմը կաջակցի ձեզ և խորհրդատվություն կտրամադրի վարակի վերահսկման և անձնական պաշտպանական սարքավորումների վերաբերյալ: Անձնական պաշտպանական սարքավորումները անվտանգ հագնելու և հանելու համար պահանջվում է շատ պարապմունք և փորձ: Մտածեք, թե ինչ իրեր կարող են ձեզ անհրաժեշտ լինել, նախքան անձնական պաշտպանական սարքավորումներ հագնելը: Անձնական պաշտպանական սարքավորումների տակից մի դիպչեք գրպաններին, պայուսակներին կամ հագուստի շերտերը մի հանեք անձնական պաշտպանական սարքավորումները հագնելիս:	Սա տարեցների խնամքի տան ընթացակարգերի մի մասն է, որպեսզի նվազագույնի հասցվի նոր վարակի տարածումը խնամքի տանը: Վարակման վերահսկումը և անձնական պաշտպանական սարքավորումների օգտագործումը կարող է նորություն լինել ձեզ համար: Ապահով լինելու համար, անձնակազմը կարող է օգնել ձեզ և ցույց տալ, թե ինչ պետք է անեք, ներառյալ՝ ինչպես օգտագործել անձնական պաշտպանական սարքավորումներ, նախքան ծառայությունը սկսելը կամ բնակչի սենյակը մտնելը: Ձեր անձնական պաշտպանական սարքավորումները հագնելուց հետո արտաքին շերտերը կարող են աղտոտվել: Դուք չպետք է դիպչեք ձեր խալաթի կամ դիմակի տակից որևէ իրի, ներառյալ հեռախոսը կամ որևէ իր գրպանից հանելու համար, քանի որ դուք ինքներդ ձեզ վարակելու վտանգի եք ենթարկում: Եթե դա անեք, դուք պետք է հանեք ձեր կրած անձնական պաշտպանական սարքավորումները, ապահով կերպով նետեք ճիշտ աղբարկղերում և մաքրեք ձեր ձեռքերը ախտահանիչով՝ նախքան նոր անձնական պաշտպանական սարքավորումներ հագնելը:
Գործողությունների տեսակները, որոնք դուք կատարում եք բնակչի հետ, հավանաբար կփոխվեն վարակի բռնկման ժամանակ: Անվտանգ այցի վերաբերյալ խորհուրդներ. • դուք կարող եք նստել ձեր բնակչի կողքին (պարտադիր չէ պահպանել 1,5 մ հեռավորություն) • Դուք կարող եք շարունակել օգնել այնպիսի գործողություններով, ինչպիսիք են մազերը և ատամները խոզանակելը, կերակրելը, խոնավեցնելը և այլ գործողություններ, որոնք անձի համար հարմարավետ են: • դուք չպետք է համբուրեք բնակչին (դուք չպետք է հանեք ձեր դիմակը) • Եթե համակարգիչ կամ այլ սարք եք օգտագործում, միայն դուք պետք է դիպչեք սարքին (այն չպետք է օգտագործվի երկուսի կողմից էլ միաժամանակ, ովքեր դիպչում են սարքին): • Հատուկ խուսափեք որևէ բանի դիպչելուց, երբ շենքի միջով գնում եք ձեր բնակչի սենյակ	Անձնակազմի հետ ստուգեք, թե ինչ գործողություններ են թույլատրվում անվտանգ կատարել: Կարող են լինել հարմար բացօթյա տարածքներ գործունեության կամ վայրի փոփոխության համար:



Այցելության օրը. Ձեր այցելության ավարտին

Ի՞նչ	Ի՞նչու՞
Անձնական պաշտպանական սարքավորումները հանելիս կարևոր է դա անել ճիշտ և տեղադրել անձնական պաշտպանական սարքավորումները վարակիչ թափոնների համար նախատեսված աղբարկղերում: Անձնակազմը կարող է օգնել ձեզ: Հիշեք, որ ձեր ձեռքերը լվանաք օճառով և ջրով անձնական պաշտպանական սարքավորումները հանելուց հետո:	Անձնական պաշտպանական սարքավորումները հանելը ամենաբարդ մասն է: Կարևոր է դա անել ճիշտ, հակառակ դեպքում վտանգ կա, որ դուք կփոխանցեք վարակը ձեզ ձեր վարակված անձնական պաշտպանական սարքավորումներից:
Եթե դուք ինչ-որ իր եք բերել բնակչի սենյակ և ցանկանում եք դրանք ետ տանել, այդ իրերը պետք է ուշադիր մաքրվեն և ախտահանվեն:	Աշխատակազմը պետք է օգնի ձեզ սովորեցնել, թե ինչպես դա անել: Տարեցների խնամքի տունը կտրամադրի ախտահանող անձեռոցիկներ և ալկոհոլային անձեռոցիկներ՝ անձնական իրերը մաքրելու և ախտահանելու համար: Պետք է զգույշ լինել, քանի որ որոշ քիմիական ապրանքներ կարող են վնասել էլեկտրոնային սարքի էկրանի մակերեսը: Հնարավոր է անհրաժեշտ լինի ստուգել արտադրողի հրահանգները:

Այցելության օրը. Երբ տուն եք հասնում

Ի՞նչ	Ի՞նչու՞
Եթե դուք այցելում եք տարեցների խնամքի տուն վարակի բռնկման ժամանակ, դուք պետք է անմիջապես տուն վերադառնաք ձեր այցելության ավարտին և փոխեք ձեր հագած հագուստը:	Ձեր տան միջավայրը աղտոտելու վտանքը նվազագույնի հասցնելու համար, դուք պետք է լվանաք ձեր հագուստը: Դուք կարող եք լվանալ ձեր հագուստը ձեր մյուս լվացքի հետ՝ օգտագործելով սովորական լվացքի փոշի և տաք ջուր:
Տուն վերադառնալիս՝ ձեռքերը լվացեք օճառով և ջրով:	Եթե ձեր այցելության ընթացքում մի քանի անգամ ձեռքերը մաքրել եք ախտահանիչով, ապա ձեր ձեռքերը կարող են կաշուն լինել ախտահանիչի շերտերից:
Եթե դիմակ կրելուց մաշկի գրգռվածություն կա, օգտագործեք խոնավեցնող կրեմ և հետևեք:	Անձնական պաշտպանական սարքավորումներ օգտագործելուց առաջ և հետո դեմքի խոնավեցնող կրեմ քսելը կօգնի նվազագույնի հասցնել մաշկի գրգռվածությունը:
Եթե ձեր այցելությունից հետո վատառողջ լինեք, տեղեկացրեք տարեցների խնամքի տան ղեկավարին: Հոգ տարեք ձեր սեփական առողջության համար: Դուք ինչ-որ մեկի խնամքի և աջակցության արժեքավոր մասն եք:	Հնարավոր է, որ դուք այցելել եք տարեցների խնամքի տուն ձեր վարակիչ շրջանի ընթացքում: Կարևոր է, որ խնամքի տունը տեղյակ լինի այդ մասին և համապատասխան միջոցներ ձեռնարկի բնակիչներին և անձնակազմին պաշտպանելու համար:

[Վիկտորիայի Առողջապահության Նախարարության վարակների կանխարգելման փորձագետների կողմից մշակված ստուգազանկ](#)



Ի՞նչ է գործընկերություն խնամքի մեջ ծրագիրը

**Գործընկերություն խնամքի մեջ
ծրագիրը խթանում է խնամքի առկա
հարաբերությունները բնակչի և նրա
ընտանիքի անդամների կամ մտերիմ
ընկերների միջև:**

Մեր խոցելի տարեցների կյանքի որակը և բարեկեցությունը կարևոր է: Համավարակի ընթացքում մենք գիտակցեցինք խնամքի շարունակականության կարևորությունը, ներառյալ այն զգալի, բացասական ազդեցությունը, առօրյա կյանքի և սոցիալական փոխհարաբերությունների խախտումը մարդու ընդհանուր բարեկեցության վրա:

Խնամքի գործընկեր դառնալը (նաև կոչվում է գործընկեր) երաշխավորում է, որ մտերիմ ընկերները և ընտանիքը կարող են պահպանել սերտ աջակցող հարաբերություններ և օգտակար լինեն տարեցների խնամքի բնակչին, երբ նրանք առավել կարիք ունեն: Սա ներառում է լրացուցիչ այցելությունների կազմակերպման հնարավորություն՝ խնամք, աջակցություն և ընկերակցություն ապահովելու համար, նույնիսկ սահմանափակ այցելության ժամանակ, օրինակ՝ վարակի բռնկումների դեպքում:

Աջակցության տեսակը, որը դուք տրամադրում եք որպես խնամքի գործընկեր, կախված կլինի ձեր հարաբերություններից և ձեր խնամած անձի կարիքներից: Այն կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են.

- օգնություն հագնվելու, բերանի խոռոչի և ատամների խնամքի, պատրաստվելու և այլ խնամքի հարցում, որը սովորաբար տրամադրում եք
- պատմություններ, սնունդ կամ այլ ժամանցի փոխանակում
- օգնել վարժություններ կատարել պարբերաբար
- օգնել այցելել հատուկ հետաքրքրություններ կայացնող վայրեր:

Կարևորն այն է, որ Գործընկերություն խնամքի մեջ ծրագիրն մասնակցությունը կարող է տեղի ունենալ միայն տարեցների խնամքի բնակչի կամ նրա ներկայացուցչի համաձայնությամբ:

Որո՞նք են գործընկեր դառնալու առավելությունները

Գործընկերություն խնամքի մեջ ծրագրին մասնակցելը երաշխավորում է, որ.

1. Բնակչի համար ավելի մեծ աջակցություն կա իր առօրյայում, ներառյալ տարեցների խնամքը, հոգեկան առողջությունը, ֆիզիկական շարժումը, սոցիալական ընկերակցությունը և մշակութային կարիքները:
2. Դուք պայմանագիր ունեք տարեցների խնամք տրամադրողի հետ և կարող եք լրացուցիչ աջակցություն տրամադրել ձեր բնակչին, երբ նա դրա կարիքն ունի և ուղեկցելով նրա համար կարևոր գործողություններով:
3. Դուք կարող եք նվազեցնել սոցիալական մեկուսացման բացասական ազդեցությունը առողջության և ընդհանուր բարեկեցության վրա
4. տարեցների խնամքի տունը գիտի այն գործողությունների մասին, որոնք դուք կատարում եք ձեր կողմից խնամվող անձի համար: Սա հատկապես կարևոր է այն ժամանակ, երբ դուք չեք կարող ծառայություն մատուցել, որպեսզի ծառայությունը շարունակի աջակցություն տրամադրել ձեր բնակչին կարևոր գործողությունները կատարելիս, ինչպիսիք են հագնվելը, ուտելը և ընկերակցությունը:
5. ձեզ աջակցում են սովորել կամ բարելավել վարակի կանխարգելման և վերահսկման ձեր հմտությունները, որպեսզի կարողանաք հնարավորինս անվտանգ այցելել ձեր կողմից խնամվող անձին, և ձեզ և մյուս բնակիչներին անվտանգ պահել:



Ի՞նչ պետք է անեմ գործընկեր դառնալու համար

Գործընկերները հաստատվում են տարեցների խնամքի բնակչի կամ նրանց ներկայացուցչի կողմից և այն անձինք են, ովքեր մտերիմ անձնական հարաբերություններ ունեն բնակչի հետ: Գործընկեր դառնալու համար խորհուրդ է տրվում, որ դուք՝

- դիտեք տեսանյութերը
- կարդաք այս փաթեթի բոլոր տեղեկատվությունը
- ավարտեք առցանց կյութերը, ինչպիսիք են առցանց ուսուցման մոդուլները, որոնք հասանելի են կայքի միջոցով
- ավարտեք ներածական դասընթացը տարեցների խնամքի ծառայության հետ

Երբ դուք վերանայեք ամբողջ տեղեկատվությունը և դիտեք տեսանյութերը, լրացրեք վերջին էջի հայտարարությունը և զրուցեք տարեցների խնամքի տան հետ ցանկացած պահանջի մասին, որը հատուկ է նրանց գործընկերություն խնամքի մեջ ծրագրին:

Գործընկերություն խնամքի մեջ համաձայնագիր

Գործընկերություն խնամքի մեջ համաձայնագիրը կարող է պաշտոնականացնել գործընկերային համաձայնությունները բնակչի և տարեցների խնամքի ծառայության հետ: Ամենակարևորն այն է, որ համաձայնագիրը օգնում է ապահովել խնամքի շարունակականությունը, եթե գործընկերը չի կարող այցելել, քանի որ ծառայությունը տեղյակ է, թե ինչ գործողություններ է ձեռնարկում գործընկերը: Սա կաջակցի ծառայությանը՝ հաշվի առնելու, թե ինչպես են նրանք աջակցելու ցանկացած կարևոր գործողությանը տվյալ հանգամանքներում:

Գործընկերություն խնամքի մեջ համաձայնագիրը կարող է ներառել.

- մանրամասներ այն գործողությունների մասին, որոնց աջակցում է գործընկերը, ներառյալ, թե որքան հաճախ են այցելում այս ծառայություններն իրականացնելու համար
- ուսուցման պահանջները, ներառյալ IPC ուսուցումը և տեղանքին հատուկ ներածական դասընթացը
- Երբ պետք է համաձայնագիրը վերանայվի:

[Կարդացեք մեր գործընկերության համաձայնագրի օրինակը.](#)

Աջակցության տեսակը, որը կարող է առաջարկել գործընկերը, կարող է փոփոխվել, եթե տարեցների խնամքի տանը առկա է վարակի բռնկում կամ ենթակա է հանրային առողջության հրահանգներին: Եթե կա COVID-ի հետ կապված վարակվածություն կամ բռնկում, տարեցների խնամքի տունը կիրականացնի բռնկման ժամանակ իր կառավարման ծրագիրը: Այս ընթացքում մուտքը պետք է հեշտացվի հնարավորինս արագ՝ ապահովելու համար, որ ձեր կողմից խնամվող անձը և բոլոր բնակիչները մշտապես հնարավորություն ունենան օգտվելու այցելություններից:

Հայտարարություն

Լրացրեք և ստորագրեք՝ հաստատելու համար,
որ կարդացել եք բոլոր ուսումնական նյութերը:

Ձեզ և ձեր այցելած տարեց մարդուն անվտանգ պահելը

Այո Ոչ

Ձեռքերի հիգիենա

Այո Ոչ

Դիմակ կրելը

Այո Ոչ

Վարակի տարածման նվազեցում բռնկման ժամանակ

Այո Ոչ

Այցելություն տարեցների խնամքի տուն վարակի
բռնկման ժամանակ

Այո Ոչ

Ստորագրված է՝

Ամսաթիվ՝



Տարեցների խնամքի որակի և անվտանգության հանձնաժողովը ճանաչում է Ավստրալիայում երկրի ավանդական տերերին և նրանց շարունակական կապը ցամաքի, ծովի և համայնքի հետ: Մենք մեր հարգանքն ենք հայտնում նրանց և նրանց մշակույթներին, և Ավագներին անցյալի և ներկայի:

Վերջին անգամ թարմացվել է՝ 11 մայիսի, 2023թ. Նոր բովանդակությամբ թարմացված տարբերակները հասանելի կլինեն. պարբերաբար ստուգեք մեր կայքը՝ որպեսզի օգտվեք ընթացիկ տարբերակներից: Եթե ցանկանում եք որևէ կարծիք հայտնել այս կյուբի վերաբերյալ, էլեկտրոնային նամակ ուղարկեք՝ education@agedcarequality.gov.au:



Հեռախոս
1800 951 822



Կայք
agedcarequality.gov.au



Գրեք
Aged Care Quality and Safety Commission
GPO Box 9819, ձեր մայրաքաղաքում